

ք. Երևան

«-----» ----- 2011թ.

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, գործելով ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Կ. Իսախանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից՝ և «Պոլիգրաֆբիզնես» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Չունգուրյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

2.

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատուցել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի **ձևաթղթերի տպագրության աշխատանքներ** (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Աշխատանքը և վճարել դրա համար:

1.2 Ծառայության մատուցումն սկսվում է 2011 թվականի փետրվարից, և իրականացվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցին համապատասխան:

2. Աշխատանքի գինը և վճարման կարգը

2.1 Սույն պայմանագրով Վաճառողի մատակարարած Աշխատանքի գինը, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է 179.9 հազար դրամ: Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատուցված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով հաշիվ-ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության (ձև N 4) հիման վրա 10 բանկային օրվա ընթացքում կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի միջև պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Կողմերը սահմանում են, որ սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում են Պետական գնումների գործակալության և Վաճառողի միջև 2010 թվականի հուլիսի 28-ին կնքված N ՊԱՇՁԲ-10/2-2 գնման նախնական պայմանագրով հաստատված օրինակելի պայմանագրի դրույթները:

3.3 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են 8 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ տարածքային կառավարման
նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011003150, 900011003168
ՀՎՀՀ 02578338

(ստորագրություն)
Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«Պոլիգրաֆբիզնես» ՍՊԸ
ք. Երևան, Գ. Քոչար 21, էլ. փոստ. pb@mail.am
«Արցախյան» ՓԲԸ
Հ/Հ 223126001369
ՀՎՀՀ 01549453

(ստորագրություն)
Կ.Տ